# ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
## ՁԱՕԿ-ԳՀ-ԾՁԲ-25/22

ք.Երևան «25» «սեպտեմբերի» 2025թ.

«Զվարթնոց» ավիաօդերևութաբանական կենտրոն» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրենի ժ/պ Թ.Հայրապետյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԷՅ ԲԻ ՆԵԹՎՈՐՔՍ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա.Բեջանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին:

### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **Ծրագրավորման ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն Պայմանագրի անբաժանելի մասը կազմող Հավելված №1-ով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2. Ծառայությունը մատուցվում է պայմանագրի Հավելված №1-ով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

### 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1. Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1. Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2. Եթե մատուցվել է պայմանագրի Հավելված №1-ում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի Հավելված №1-ով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2. Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1. Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2. Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3. Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1. Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4. Կատարողը պարտավոր է՝**

2.4.1. Պայմանագրի Հավելված №1-ով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2. Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3. Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

### 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:
Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված №2.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (Հավելված №2): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները,

որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2. Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3. Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4. Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա ծառայության գինը կազմում է **3 800 000 (երեք միլիոն ութ հարյուր հազար)** ՀՀ դրամ: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:
Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2. Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ վճարման ժամանակացույցով, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:
Ընդ որում, վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2. Պայմանագրի Հավելված №1-ում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը: Ընդ որում, տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը Պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3. Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4. Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5. Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6. Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7. Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով և Պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2. Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3. Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4. Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5. Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6. Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7. Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8. Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9. Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10. Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (Հավելված №3) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

7.11. Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.12. Պայմանագիրը կազմված է 4 (չորս) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Պայմանագրի Հավելվածներ №№ 1-ը, 1.1-ը, 2-ը, 3-ը 3.1-ը և 4-ը հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.13. Պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

**«Զվարթնոց» ԱՕԿ» ՓԲԸ**

ք.Երևան, «Զվարթնոց» միջազգային օդանավակայան,
նախկին ԲՍ համալիր թիվ 2
ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900018009101
ՀՎՀՀ 01201217

«Զվարթնոց» ԱՕԿ» ՓԲԸ-ի
տնօրենի ժ/պ

***Թ.Հայրապետյան***

________________
(ստորագրություն)

**Կ.Տ.**

**ԿԱՏԱՐՈՂ**

**«ԷՅ ԲԻ ՆԵԹՎՈՐՔՍ» ՍՊԸ**

ք.Երևան, Բաշինջաղյան փ.,շ. 192,բն.79
«ԱԿԲԱ բանկ» ԲԲԸ
ՀՀ 220569690021001
ՀՎՀՀ 01285838

«ԷՅ ԲԻ ՆԵԹՎՈՐՔՍ» ՍՊԸ-ի
տնօրեն

***Ա.Բեջանյան***

________________
(ստորագրություն)

**Կ.Տ.**

Հավելված №1
«_____» «______________» 2025թ. կնքված
«ՁԱՕԿ-ԳՀ-ԾՁԲ-25/22» ծածկագրով պայմանագրի

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| «Զվարթնոց» ԱՕԿ» ՓԲԸ<br>տնօրենի ժ/պ<br>*Թ.Հայրապետյան*<br>------------------------<br>(ստորագրություն)<br>Կ.Տ. | «ԷՅ ԲԻ ՆԵԹՎՈՐՔՍ» ՍՊԸ<br>տնօրեն<br>*Ա.Բեջանյան*<br>------------------------<br>(ստորագրություն)<br>Կ.Տ. |

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր գինը | ընդհանուր քանակը | մատուցման | |
| | | | | | | ժամկետը | հասցեն |
| 1 | 72241300 | Ծրագրավորման ծառայություններ տեխնիկական բնութագիրը ըստ հավելված 1.1 | դրամ | 3 800 000 | 1 | Պայմանագրի կնքումից հետո՝ 20 օրացուցային օր ժամկետում | ք.Երևան, «Զվարթնոց» միջազգային օդանավակայան, նախկին ԲՍ համալիր թիվ 2 |

Հավելված №1.1
«_____» «______________» 2025թ. կնքված
«ՀԱՕԿ-ԳՀ-ԾՁԲ-25/22» ծածկագրով պայմանագրի

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

## Ծրագրավորման ծառայություններ

<table>
<tr><th rowspan="2">Հ/Հ</th><th colspan="2">Ձեռքբերվող ծառայության նկարագիր</th></tr>
<tr><th>Անվանումը</th><th>Բնութագիրը</th></tr>
<tr><td>1</td><td>Ծրագրավորման ծառայություններ</td><td>Գործող АМИС-РФ ծրագրային ապահովման միջոցի մեջ ներմուծվող կայանի և տվիչների բնութագրերը և թարմացման նկատմամբ պահանջները<br>Ավտոմատ օդերևութաբանական կայան Vaisala AWS310-SITE<br>1. Բաղադրիչները<br>1.1 Քամու տվիչ<br>1.2 Ջերմաստիճանի/ խոնավության տվիչ<br>1.3 Ճնշման տվիչ<br>1.4 Տեղումնաչափ<br>Կայանում ներառված տվիչների հիմնական տեխնիկական բնութագրերը<br>Քամու տվիչ WMT-700<br>Քամու տվիչի արագության չափման տեխնիկական բնութագրերը<br>1) Չափման միջակայք՝ 0-ից... 75 մ/վ<br>2) Մեկնարկային շեմ՝ 0.01 մ/վ<br>3) Չափման քայլ՝ 0.01 մ/վ<br>4) Արձագանքման ժամանակը՝ 250 մվ<br>5) Ճշգրտություն՝0... 75 մ/վ ՝ ± 0.1 մ/վ<br>Քամու տվիչի ուղղության չափման տեխնիկական բնութագրերը<br>1) Դիտարկման տիրույթ՝ 0... 360°<br>2) Մեկնարկային շեմ՝ 0.1 մ/վ<br>3) Չափման քայլ՝ 0.01 °<br>4) Արձագանքման ժամանակը՝ 250 մվ<br>5) Ճշգրտություն՝ ±2°<br>6) Կապի պրոտոկոլներ՝ RS 485, RS 422, RS 232,<br>Աշխատանքային միջավայր<br>1) Գործող ջերմաստիճան–40°C... +60°C<br>Ջերմաստիճանի/խոնավության տվիչ HMP-155<br>1) Չափման տիրույթ՝ ջերմաստիճան –80°C... +60°C, խոնավություն 0 ... 100 %RH<br>2) Արձագանքման ժամանակը ջերմաստիճան 3մ/վ օդի հոսքում 35վ խոնավություն անշարժ օդում 63 %: 20վ, 90 %: 60վ<br>3) Պահպանման ջերմաստիճանը –80... +65 ° C<br>4) Աշխատանքային լարումը 7...28 V DC<br>5) Ելքային ազդանշանը՝ RS485<br>6)Պաշտպանածության աստիճանը IP66<br>Ճնշումնաչափ PTB 330<br>1) Բարոմետրիկ ճնշման միջակայք 500 ... 1100 hPA<br>2)Գծայինություն ±0.05 hPa ±0.10 hPa<br>3) Հիստերեզիս ±0.03 hPa ±0.03 hP<br>4) Ճշգրտություն +20 °C (+68 °F) ±0.10 hPa ±0.20 hPa<br>5) Ելքային ազդանշանը RS 485, RS 422, RS 232,<br>Տեղումնաչափ PLUVIOINST400-2<br>1) Տեղումների տեսակը Անձրև, ձյուն, կարկուտ<br>2) Ճշգրտություն 2 % 1 լ/ժ-ում (0,26 գալ/ժ)<br>3) Տեղումների հզորություն Անսահմանափակ<br>4) Չափման քայլը 0,1մմ(0,004 դյույմ)<br>Ավտոմատ օդերևութաբանական կայանի հաղորդակցման տվյալներ<br>Հաղորդակցման ինտերֆեյսը COM1: RS-485<br>Բիթային արագություն 300, 1200, 2400, 4800, 9600, 19200, 38400, 57600 կամ 115200<br>Հաղորդագրության ստացման միջակայքը 250 մվկ.</td></tr>
</table>

| | | |
|---|---|---|
| | | Տվյալների միջինացումը 1րոպե<br>Ծրագրի հետ հաղորդակցման ինտերֆեյսը RS-232<br>**Տեսանելիության հեռավորության տվիչ FD-70P**<br>1. Չափման տիրույթ՝ 1 մ… 100 կմ<br>2. Չափման քայլ՝ 1 մ<br>3. Անճշտությունը աշխատանքային պայմաններում ՝ ± 10 % կամ 1 մ…10 կմ ± 20 % 10…100 կմ<br>4. Չափման սխալանք՝ ± 0.7 %<br>5. Կապի պրոտոկոլներ՝ RS 485, RS 422, RS 232,<br>6. Կազմում ունի LM21 ֆոնային լուսավորության տվիչ:<br>**Տեսանելիության հեռավորության տվիչի հաղորդակցման տվյալներ**<br>Հաղորդակցման ինտերֆեյսը COM1: RS-485<br>Բիթային արագություն 300, 1200, 2400, 4800, 9600, 19200, 38400, 57600 կամ 115200<br>Հաղորդագրության ստացման միջակայքը 250 մվկ.<br>Տվյալների միջինացումը 1րոպե<br>Ծրագրի հետ հաղորդակցման ինտերֆեյսը RS-232<br>**Ամպի ստորին սահմանի բարձրության տվիչ CL-31**<br>1) Չափման տիրույթ՝ 0 մ… 7,6 կմ<br>2) Չափման քայլ՝ 10 մ<br>3) Անճշտությունը՝ ± 1 %<br>4) Էլ. սնուցումը՝ 230 V AC<br>5) Դուրս եկող ազդանշանը RS232/RS485/DXL421 մոդեմի համար նախատեսված<br>**Ամպի ստորին սահմանի բարձրության տվիչի հաղորդակցման տվյալներ**<br>Հաղորդակցման ինտերֆեյսը DXL421 մոդեմ<br>Հաղորդագրության ստացման միջակայքը 250 մվկ.<br>Տվյալների միջինացումը 1րոպե<br>Ծրագրի հետ հաղորդակցման ինտերֆեյսը RS-232:<br>**Ընդհանուր պահանջներ**<br>Ծրագրի հետ հաղորդակցման արագությունը՝ ըստ տվիչների տվյալների:<br>Բոլոր տվիչների (քամու ուղղություն և արագություն, ջերմաստիճան, խոնավություն, ճնշում, տեսանելիության հեռավորություն, ֆոնային լուսավորության, ամպի ստորին սահմանի բարձրություն) տվյալները, բացի տեղումնաչափի տվյալներից պետք է արտացոլվեն գործող АМИС-РФ և BI ծրագրային ապահովման միջոցների ինտերֆեյսների մեջ:<br>Բոլոր տվիչների տվյալները, բացի տեղումնաչափի տվյալներից, պետք է մտնեն METAR և ATIS հաղորդագրությունների մեջ ավտոմատ, ինչպես նաև պետք է նախատեսված լինի դիտորդի կողմից տվյալների ձեռքով մուտքագրելու հնարավորություն: Տեղումնաչափի տվյալները պետք է ներմուծվեն գործող АМИС-РФ ծրագրային ապահովման միջոցի КН-01 հաղորդագրության դաշտի մեջ ավտոմատ, ինչպես նաև պետք է նախատեսված լինի դիտորդի կողմից տվյալների ձեռքով մուտքագրելու հնարավորություն:<br>Պետք է նախատեսված լինի ամպի ստորին սահմանի բարձրության տվիչի տվյալների արտապատկերումը մետրից ոտնաչափ և հակառակն անցման հնարավորություն, համապատասխան դաշտերում չափման միավորի փոփոխությամբ:<br>Բոլոր տվիչների տվյալները իրենց կարգավիճակային հաղորդագրությունների հետ միասին պետք է արխիվացվեն:<br>АМИС-РФ ծրագրային ապահովման երաշխիքային սպասարկում, գիտական, մեթոդական և տեխնիկական աջակցում աշխատանքի ավարտից հետո 1 (մեկ) տարվա ընթացքում: |

Հավելված №2
«_____» «______________» 2025թ. կնքված
«ՁԱՕԿ-ԳՀ-ԾՁԲ-25/22» ծածկագրով պայմանագրի

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| «Զվարթնոց» ԱՕԿ» ՓԲԸ | «ԷՅ ԲԻ ՆԵԹՎՈՐՔՍ» ՍՊԸ-ի |
| տնօրենի ժ/պ | տնօրեն |
| *Թ.Հայրապետյան* | *Ա.Բեջանյան* |
| __________________ (ստորագրություն) | __________________ (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ |

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

(հազար դրամ)

| Աշխատանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025 թվականին՝ այդ թվում (ըստ ամիսների աճողական կարգով) | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 72241300 | Ծրագրավորման ծառայություններ | - | - | - | - | - | - | - | - | - | 3 800.0 | 3 800.0 | 3 800.0 | 3 800.0 |

Հավելված №3
«_____» «______________» 2025թ. կնքված
«ԶԱՕԿ-ԳՀ-ԾՁԲ-25/22» ծածկագրով պայմանագրի

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
«Զվարթնոց» ԱՕԿ» ՓԲԸ
ք.Երևան, «Զվարթնոց» միջազգային օդանավակայան, նախկին ԲՍ համալիր թիվ 2
ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900018009101
ՀՎՀՀ 01201217

**ԿԱՏԱՐՈՂ**
«ԷՅ ԲԻ ՆԵԹՎՈՐՔՍ» ՍՊԸ
ք.Երևան, Բաշինջաղյան փ.,շ. 192,բն.79
«ԱԿԲԱ բանկ» ԲԲԸ
ՀՀ 220569690021001
ՀՎՀՀ 01285838

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«_____» «______________» 2025 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ***Ծառայությունների մատուցման գնման պայմանագիր***
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____________» 2025թ.
Պայմանագրի համարը՝ «ԶԱՕԿ-ԳՀ-ԾՁԲ-25/22»
Պատվիրատուն և Կատարողը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «__________________» 2025 թ. դուրս գրված № ______________ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

| № | Կատարված աշխատանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց
__________________________
ստորագրություն
__________________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Աշխատանքը ընդունեց
__________________________
ստորագրություն
__________________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված №3.1
«_____» «______________» 2025թ. կնքված
«ՋԱՕԿ-ԳՀ-ԾՁԲ-25/22» ծածկագրով պայմանագրի

**ԱԿՏ №**
**պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ**

Սույնով արձանագրվում է, որ «Ջվարթնոց» ավիաօդերևութաբանական կենտրոն» ՓԲԸ (այսուհետ՝ Պատվիրատու) և «ԷՅ ԲԻ ՆԵԹՎՈՐՔՍ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև«____» «______________» 2025 թվականին կնքված № «ՋԱՕԿ-ԳՀ-ԾՁԲ-25/22» գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը «_____» «_____________» 2025 թվականին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

| Աշխատանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

**ԿՈՂՄԵՐԸ**

**Հանձնեց**

______________________________
ազգանուն, անուն

______________________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________________________
ազգանուն, անուն

______________________________
ստորագրություն

Հավելված №4
«_____» «_______________» 2025թ. կնքված
№ «ՁԱՕԿ-ԳՀ-ԾՁԲ-25/22» ծածկագրով պայմանագրի

# ԾԱՆՈՒՑՈՒՄ

______________ֆինանսական գործակալի անվանումը______________ հայտնում է, որ.

1. «Ջվարթնոց» ավիաօդերևութաբանական կենտրոն ՓԲԸ-ի և «ԷՅ ԲԻ ՆԵԹՎՈՐՔՍ» ՍՊԸ-ի միջև «___» «________» 2025թ. կնքված «ՁԱՕԿ-ԳՀ-ԾՁԲ-25/22» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և «ԷՅ ԲԻ ՆԵԹՎՈՐՔՍ» ՍՊԸ-ի միջև «___» «________» 2025թ. կնքվել է «__________» ծածկագրով ֆակտորինգի պայմանագիրը,
2. համաձայն է Պայմանագրի 7.10 կետով սահմանված պահանջներին:

______________________________________ ____________________
ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

«___» «________» 2025 թ.

**Հավելված 5.1**
**«ՁԱՕԿ-ԳՀ-ԾՁԲ-25/22» ծածկագրով**
**գնանշման հարցման հրավերի**

## ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
**(պայմանագրի ապահովում)**

ք. Երևան

«______»________________________ 2025 թ.

«Էյ Բի Նեթվորքս» ՍՊԸ-ն ի դեմս Ընկերության տնօրեն Ա.Բեջանյանի, նույնականացման քարտ՝ 012181392, տրված՝ 05.08.2020թ. 012- ի կողմից, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

### 1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է «Զվարթնոց» ավիաօդերևութաբանական կենտրոն ՓԲԸ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ ՁԱՕԿ-ԳՀ-ԾՁԲ-25/22 ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի (այսուհետ՝ Պահանջագիր) ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.4 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.5 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.6 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.7 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.8 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է «ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ» ՓԲԸ (Վարկային բյուրո):

### 2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և ուժի մեջ են մինչև Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունների ամբողջական կատարման վերջին օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1 Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2 Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

### 3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

«Էյ Բի Նեթվորքս» ՍՊԸ
Ք.Երևան, Բաշինջաղյան փ., 2. 192, բն. 79
«ԱԿԲԱ բանկ» ՓԲԸ
ՀՀ 220569690021001
ՀՎՀՀ 01285838

**տնօրեն՝ Ա.Բեջանյան** ____________________
ստորագրություն

Կ.Տ.

| | |
|---|---|
| 1. **ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ** | |
| 2. Թիվ | |
| 3. Ներկայացման ամսաթիվը՝ «____» «________» 20__թ. | |
| 4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն **«Էյ Բի Նեթվորքս» ՍՊԸ** | |
| 5. Վճարողին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն **«ԱԿԲԱ բանկ» ՓԲԸ** | |
| 6. Վճարողի հաշվի համարը՝ **220569690021001** | |
| 7. Վճարողի ՀՎՀՀ՝ **01285838** | |
| 8. Վճարողի ՀԾՀ՝ | |
| 9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն՝ **«Զվարթնոց» ավիաօդերևութաբանական կենտրոն ՓԲԸ** | |
| 10. Շահառուի ՀԾՀ (չի լրացվում) | |
| 11. Շահառուի ՀՎՀՀ՝ **01201217** | |
| 12.Շահառուին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ «**ՖՆ գործառնական վարչություն** | |
| 13.Շահառուի հաշվի համարը (հշ.N) **900018009101** | |
| 14.Գումարը (թվերով և բառերով)՝ **400 000 (չորս հարյուր հազար)** | |
| 15. Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում) | |
| 16.Արժույթը (բառերով և կոդով)՝ **ՀՀ դրամ, AMD** | |
| 17.Գործարքի (վճարման) նպատակը՝ **պայմանագրի կատարման ապահովման համար** | |
| 18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)՝ **ԶԱՕԿ-ԳՀ-ԾՁԲ-25/22** | |
| 19. Վճարման պայմանները՝ **ակցեպտավորված վճարում** | |
| 20. Առդիր էջերի քանակը՝ էջ | |
| 22.ա. Շահառուի ստորագրությունները<br><br>/____________________/<br><br>/____________________/<br><br>22.բ. Կ.Տ. | 21.ա. Վճարողի ստորագրությունները<br><br>/____________________/<br><br>/____________________/<br><br>21.բ. Կ.Տ. |
| 24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն<br><br>/____________________/<br>/ստորագրություն/<br><br>24.բ. Կ.Տ.<br><br>24.գ "___" ___ 20___ թ. | 23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն<br><br>/____________________/<br>/ստորագրություն/<br><br>23.բ. Կ.Տ.<br><br>23.գ.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ. |

Հավելված 4.2
«ՋԱՕԿ-ԳՀ-ԾՁԲ-25/22» ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

# ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
**(որակավորման ապահովում)**

ք. Երևան «______»________________ 2025թ.

«Էյ Բի Նեթվորքս» ՍՊԸ-ն ի դեմս Ընկերության տնօրեն Ա.Բեջանյանի, նույնականացման քարտ՝ 012181392, տրված՝ 05.08.2020թ. 012-ի կողմից, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

**1. Համաձայնության առարկան**

1.1 Ընկերությունը մասնակցում է «Զվարթնոց» ավիաօդերևութաբանական կենտրոն ՓԲԸ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ «ՋԱՕԿ-ԳՀ-ԾՁԲ-25/22» ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում ընտրված մասնակից, կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում, Ընկերությունը, Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի (այսուհետ՝ Պահանջագիր) ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ՝

1.4 ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

1.5 բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:/վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

1.6 գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:/վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

1.7 դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

1.8 ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.9 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում, եթե այն հանգեցնում է Պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծման, Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը:

1.10Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.11 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.12Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.13Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.14Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է «ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ» ՓԲԸ (Վարկային բյուրո):

**2. Այլ պայմաններ**

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և ուժի մեջ են մինչև Պատվիրատուի կողմից կնքված պայմանագրի կատարման արդյունքը ամբողջական ընդունվելու օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

**3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝**

«Էյ Բի Նեթվորքս» ՍՊԸ
Ք.Երևան, Բաշինջաղյան փ., շ. 192, բն. 79
«ԱԿԲԱ բանկ» ՓԲԸ
ՀՀ 220569690021001
ՀՎՀՀ 01285838
տնօրեն **Ա.Բեջանյան**

ստորագրությունը
Կ.Տ.

| | |
|---|---|
| 1. | ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ |
| 2. Թիվ | |
| 3. Ներկայացման ամսաթիվը՝ «____» «________» 20__թ. | |
| 4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն **«Էյ Բի Նեթվորքս» ՍՊԸ** | |
| 5. Վճարողին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն **«ԱԿԲԱ բանկ» ՓԲԸ** | |
| 6. Վճարողի հաշվի համարը՝ **220569690021001** | |
| 7. Վճարողի ՀՎՀՀ՝ **01285838** | |
| 8. Վճարողի ՀԾՀ՝ | |
| 9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն՝ **«Զվարթնոց» ավիաօդերևութաբանական կենտրոն ՓԲԸ** | |
| 10. Շահառուի ՀԾՀ (չի լրացվում) | |
| 11. Շահառուի ՀՎՀՀ՝ **01201217** | |
| 12.Շահառուին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ **«ՖՆ գործառնական վարչություն** | |
| 13.Շահառուի հաշվի համարը (հշ.N) **900018009101** | |
| **14.Գումարը (թվերով և բառերով)՝ 600 000 (վեց հարյուր հազար)** | |
| 15. Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում) | |
| 16.Արժույթը (բառերով և կոդով)՝ **ՀՀ դրամ, AMD** | |
| 17.Գործարքի (վճարման) նպատակը՝ **(որակավորման ապահովման համար)** | |
| 18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)՝ **ԶԱՕԿ-ԳՀ-ԾՁԲ-25/22** | |
| 19. Վճարման պայմանները՝ **ակցեպտավորված վճարում** | |
| 20. Առդիր էջերի քանակը՝ էջ | |
| 22.ա. Շահառուի ստորագրությունները<br>/_____________________/<br>/_____________________/<br>22.բ. Կ.Տ. | 21.ա. Վճարողի ստորագրությունները<br>/_____________________/<br>/_____________________/<br>21.բ. Կ.Տ. |
| 24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն<br>/_____________________/<br>/ստորագրություն/<br>24.բ. Կ.Տ. | 23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն<br>/_____________________/<br>/ստորագրություն/<br>23.բ. Կ.Տ. |
| 24.գ "___" ___ 20___ թ. | 23.գ.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ. |